Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

02 դեկտմբերի 2024թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացող միջոցների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24» ծածկագրով գնման ընթացակարգի 17, 22 և 23-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ-ն և 2024թ. մայիսի 27-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24-01/224 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

«ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) սահմանված մատակարարման (Պայմանագրի կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում) ժամկետները որի հետ կապված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը 23-րդ չափաբաժնի մասով լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասերով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԳԻՆԳԿՈ» ՍՊԸ	00229833	ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար 147/1, բն" 41		Առկա է		Որոշում առ 2024 թվականի դեկտեմբերի 2-ի Գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24»